ԱՄՍԻՍ 19-ԻՆ ՀԵՌԱԳՐԵՐԸ ԹԻՖԼԻՍԻՑ ԳՈՒԺԵՑԻՆ

ՏԽՈՒՐ ԼՈՒՐ

ԱՐԾՐՈՒՆԻՆ ՄԵՌԱՒ

Կորուստը մեծ է։ Մեռնում է անհամեմատելի հրապարակախօսը, որի գրչի ուժը, ընկերութեան բոլոր խաւերի վրայ, որի բարոյական ազդեցութեան գաղտնիքը, իւր անաչառութեան, անկեղծութեան, շիտակն և ճշմարիտը համարձակ, անվեհեր, առանց պատիպատութեան բացայայտելու մէջ էր։ Երկար և ձիգ տարիներ նա կռուում էր խաւարի և տգիտութեան դէմ և, անընկճելի ախոյեան՝ նա մեռնում է յաղթանակը ձեռին, իւր ձայնով գիտակցութեան հրաւիրուած ժողովրդի բաղձանքը պսակուած վայրկենում։

Վերապահելով մեզ մի այլ անգամ դառնալ անմոռանալի հրապարակախօսի վրայ խօսելու պարտականութեան, «Արարատ»-ի խմբագրութիւնը Մայր Տաճարի մերձաւորութիւնից անմեռ յիշատակի մաղթանքն է ուղղում դէպի մեծ հանգուցեալը և յաւիտենական հանգիստ մաղթում նորա հոգուն։